ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ, ՎԱԿՑԻՆԱՆԵՐՈՎ ԵՎ ԱՅԼ ԻՄՈՒՆԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐՈՎ, ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐՈՎ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ մասնակից պետություններ,

ղեկավարվելով "Բնակչության առողջության պահպանության բնագավառում համագործակցության մասին" 1992 թվականի հունիսի 26-ի Համաձայնագրով,

հատուկ նշանակություն տալով բնակչությանը Համագործակցության մասնակից պետություններում արտադրվող դեղամիջոցներով, վակցինաներով եւ այլ իմունակենսաբանական պատրաստուկներով, բժշկական նշանակության առարկաներով եւ բժշկական տեխնիկայով ապահովելու մասին, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Մասնակից պետությունները օժանդակություն կցուցաբերեն բժշկական արտադրանք թողարկող, դեղատնային ծառայության եւ բժշկական տեխնիկայի ձեռնարկություններին դեղամիջոցներով, վակցինաներով եւ այլ իմունակենսաբանական պատրաստուկներով, բժշկական նշանակության առարկաներով եւ բժշկական տեխնիկայով ապահովելու գործում՝ սեփական պետական կարիքների համար եւ միջկառավարական համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ 2

Մասնակից պետությունները պայմանավորվեցին ստեղծել դեղամիջոցների, վակցինաների եւ այլ իմունակենսաբանական պատրաստուկների, բժշկական նշանակության առարկաների եւ բժշկական տեխնիկայի արտադրության ու փոխադարձ մատակարարման բնագավառում համագործակցության միջպետական համակարգ:

ՀՈԴՎԱԾ 3

Մասնակից պետությունները կհանձնարարեն առողջապահության բնագավառում համագործակցության գծով Անկախ Պետությունների Համագործակցության Խորհրդին, համաձայնեցնելով Համագործակցության մասնակից պետությունների շահագրգիռ նախարարությունների եւ գերատեսչությունների հետ, երկամսյա ժամկետում պատրաստել կոնկրետ առաջարկություններ միջպետական համակարգի գործունեության մեխանիզմի վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 4

Մասնակից պետությունները կօժանդակեն մատակարարվող դեղամիջոցների, վակցինաների եւ այլ իմունակենսաբանական պատրաստուկների, բժշկական նշանակության առարկաների եւ բժշկական տեխնիկայի համար փոխադարձ վճարումների իրականացմանը առաջնահերթ կարգով, անկախ նրանց միջեւ վճարային հաշվեկշռի վիճակից, հաշվի չառնելով սույն Համաձայնագրի մասնակից պետությունների միջեւ վճարային հաշվեկշռի կարգավորման միջոցով դեղամիջոցների, բժշկական նշանակության այլ առարկաների եւ բժշկական տեխնիկայի համար վճարումները:

ՀՈԴՎԱԾ 5

Մասնակից պետությունները կհանձնարարեն համապատասխան նախարարություններին՝ նախատեսելու արտոնյալ նպատակային վարկերի եւ բյուջետային նպաստների հատկացում

բժշկական արտադրանք թողարկող, դեղատնային ծառայության եւ բժշկական տեխնիկայի համակարգի ձեռնարկությունների շրջանառու միջոցների համալրման նպատակով՝ անկախ դրանց գերատեսչական պատկանելիությունից:

ՀՈԴՎԱԾ 6

Մասնակից պետությունները բժշկական արտադրանք թողարկող, դեղատնային ծառայության եւ բժշկական տեխնիկայի համակարգի ձեռնարկությունների տեխնիկական վերազինման արագացման, դեղամիջոցների, բժշկական նշանակության առարկաների եւ բժշկական տեխնիկայի գների նվազեցման, դրանց թողարկման մեծացման, բնակչության սոցիալական պաշտպանության նպատակով, միաժամանակ անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն արտահանման եւ ներմուծման մաքսային տուրքեր վճարելուց եւ հավելյալ արժեքից հարկեր գանձելուց ազատելու համար,

արտահանվող դեղամիջոցների, վակցինաների եւ այլ իմունակենսաբանական պատրաստուկների, բժշկական նշանակության առարկաների եւ բժշկական տեխնիկայի համար,

այդ նպատակների համար ներմուծվող հումքի, նյութերի եւ տեխնոլոգիական սարքավորման, ներառյալ ապրանքափոխանակման (բարտերային) գործողությունների համար:

ՀՈԴՎԱԾ 7

Մասնակից պետությունները կհանձնարարեն առողջապահության նախարարություններին տալ (Ուկրաինայի համապատասխան գերատեսչությանը) դեղամիջոցների, վակցինաների եւ այլ իմունակենսաբանական պատրաստուկների, բժշկական նշանակության առարկաների եւ բժշկական տեխնիկայի արտահանման եւ ներմուծման համար թույլտվություններ (լիցենզիաներ)՝ դրանց տրամադրման մեխանիզմի պարզեցման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 8

Մասնակից պետությունները բժշկական արտադրանք թողարկող, դեղատնային ծառայության եւ բժշկական տեխնիկայի համակարգի ձեռնարկությունների զարգացմանը խթանելու նպատակով իրենց օրենսդիր մարմիններին առաջարկություններ կներկայացնեն դեղամիջոցների, վակցինաների եւ այլ իմունակենսաբանական պատրաստուկների, բժշկական նշանակության առարկաների եւ բժշկական տեխնիկայի իրացումից ստացվող եկամտահարկի դրույքաչափի 50% նվազեցման մասին:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը բաց է դրա նպատակները եւ սկզբունքները լիովին կիսող այլ պետությունների կողմից միանալու համար:

ՀՈԴՎԱԾ 10

Յուրաքանչյուր մասնակից պետություն իրավունք ունի դուրս գալու սույն Համաձայնագրից՝ ենթադրվող դուրս գալուց առնվազն վեց ամիս առաջ իր որոշման մասին գրավոր Բելառուսի Հանրապետության Կառավարությանը ծանուցելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն Համագործակցության մասնակից պետությունների փոխադարձ պայմանավորվածությամբ:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման կամ հաստատման, մասնակից պետությունների օրենսդրական ընթացակարգերին համապատասխան, եւ ուժի մեջ է մտնում ավանդապահին երրորդ վավերագիրը կամ հաստատման մասին ծանուցումը ի պահ հանձնելուց հետո:

Կատարված է Աշգաբադ քաղաքում 1993 թվականի դեկտեմբերի 24-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն:

Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի դրա հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1995 թվականի մարտի 9-ից: